ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ~~ԼՐԱՑՈՒՄ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1.

«Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետից հետո լրացնել 4.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ՝«4.1) համայնքներին բաշխված համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությունները.»:

~~«Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից հետո լրացնել 5.1-ին կետ հետեւյալ բովանդակությամբ՝~~

~~«5.1) Հաստատում է ռոյալթիներից գոյացած գումարների ծախսման ծրագրերը եւ վերահսկում դրանց իրականացումը.»:~~

Հոդված 2.

. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից հետո լրացնել 5.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ՝ «5.1) հաստատում է համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը և վերահսկում դրանց իրականացումը.»:

~~Օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետում «վճարներից» բառից հետո լրացնել «եւ ռոյալթիներից» բառերը:~~

Հոդված 3.

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հետո լրացնել 3.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ՝ «3.1) տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը.»:

~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:~~

Հոդված 4. Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հետո լրացնել 1.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ՝ «1.1) կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը, դրանցում առաջարկվող փոփոխությունները, ընթացիկ տարվա ծրագրի վերաբերյալ լուրաքանչյուր տարի մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.»:

Հոդված 5. Օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետում «վճարներից» բառից հետո լրացնել «և ռոյալթիներից» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից: